ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. **N ----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին» N 69-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացում՝

1) Որոշման և Որոշման N2 հավելվածի վերնագրերում ու ամբողջ տեքստում «բաժնեմաս ունեցող կազմակերպությունների» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների» բառերով և դրանց հոլովաձևերով.

2) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) Կանոնադրական կապիտալում Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման և համայնքի բաժնեմասից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:»

3) Որոշման 1-ին կետը լրացնել 4-րդ ենթակետով.

«4) Կանոնադրական կապիտալում 50 տոկոսից ավելի համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից համայնքային բաժնեմասից ստացված տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի հաշվարկի ձևը՝ համաձայն N4 հավելվածի:»

4) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «զուտ շահույթի» բառերը փոխարինել «շահութաբաժինների հաշվարկման բազայի» բառերով:

5) Որոշման N1 և N3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

2. Սույն որոշումը կիրառվում է 2020 թվականի և հաջորդ տարիների գործունեության արդյունքում առևտրային կազմակերպությունների կողմից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման գործընթացների նկատմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված N1

Հաստատված է Երևան քաղաքի
ավագանու 2020 թվականի
-------N ---------- որոշմամբ

«Հավելված N1

Հաստատված է Երևան քաղաքի
ավագանու 2010 թվականի
18 մարտի N69-Ա որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԺՆԵՄԱՍԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են կանոնադրական կապիտալում Երևան համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականություն համարվող բաժնեմաս (բաժնետոմսեր) ունեցող առևտրային կազմակերպությունների զուտ շահույթի բաշխման ուղղությունները, համայնքի բաժնեմասից (բաժնետոմսերից) ստացվող շահութաբաժինների հաշվարկման և Երևանի բյուջե վճարման գործընթացը և այդ գործընթացի նկատմամբ վերահսկողության հիմունքները:

II. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո առևտրային կազմակերպության տրամադրության տակ մնացող շահույթը (այսուհետ՝ զուտ շահույթ) բաշխվում է հետևյալ ուղղություններով՝

1) պահուստային հիմնադրամի ձևավորում, որն իրականացվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան.

2) շահութաբաժինների վճարում բաժնետերերին (մասնակիցներին)՝ սույն կարգի պահանջներին համապատասխան.

3) միասնական բազմանպատակային նշանակության (կուտակման, սպառման, սոցիալական ոլորտի) հիմնադրամի ստեղծում:

3. Միասնական բազմանպատակային հիմնադրամի՝ ըստ հիմնական ուղղությունների զուտ շահույթի բաշխման համամասնությունները առևտրային կազմակերպությունը որոշում է ինքնուրույն՝ պահպանելով առևտրային կազմակերպության զարգացումն ապահովող կուտակման առաջնահերթությունը:

4. Միասնական բազմանպատակային հիմնադրամի՝ ըստ հիմնական ուղղությունների զուտ շահույթի բաշխման համամասնությունները հաշվի են առնվում առևտրային կազմակերպության հաջորդ տարվա դրամական միջոցների հոսքերի նախահաշիվը կազմելիս:

III. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲԱԺՆԵՄԱՍԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Կանոնադրական կապիտալում 50 տոկոսից ավելի համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից համայնքային բաժնեմասից ստացված տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազան (այսուհետ՝ հաշվարկման բազա) ձևավորվում է նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով ստացված զուտ շահույթի գումարից, հաշվի առած այն ավելացումները, որոնք շահութաբաժնի հաշվարկման տեսանկյունից եկամտից նվազեցում չեն դիտարկվում (այսուհետ՝ զուտ շահույթին ավելացումներ):

6. Զուտ շահույթին ավելացումներ են համարվում.

1) ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվների սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությունը:

2) պետական կամ համայնքների բյուջեներ կամ կուտակային կենսաթոշակային համակարգին կատարվող վճարումների կամ հարկային մարմնի կողմից վերահսկվող այլ գումարների մասով Հարկային օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված կարգով հաշվարկվող և վճարվող տույժերը, տուգանքները և այլ գույքային պատժամիջոցները.

3) անհատույց տրամադրած ակտիվների (այդ թվում՝ առանձին ֆիզիկական և իրավաբանական անձանց անհատույց ֆինանսական և նյութական օգնության կամ խրախուսման տրամադրման և այլ համանման ծախսեր) և ներված պարտավորությունների արժեքը:

IV. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲԱԺՆԵՄԱՍԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունները տարեկան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ, բայց ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա ապրիլի 15-ը, Երևանի քաղաքապետին են ներկայացնում զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ՝ սույն որոշման 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով հաստատված ձևերի համաձայն՝ դրանց կցելով հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունների NN 1-2 ձևերը:

8. Առևտրային կազմակերպությունների կողմից առաջարկվող շահութաբաժինների՝ Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված չափի նվազեցման վերաբերյալ առաջարկություններին կցվում են նաև ֆինանսատնտեսական հիմնավորումները, առողջացման ծրագրերը և խորհրդի (դրա առկայության դեպքում)՝ ընդհանուր ժողովին ուղղված առաջարկությունը, ինչպես նաև առևտրային կազմակերպությունները համակարգող՝ Երևանի քաղաքապետի տեղակալի (խորհրդականի) կամ Երևանի

քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման եզրակացությունը:

9. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը (ֆինանսական վարչություն) Երևան քաղաքի ավագանու հաստատմանն են ներկայացնում Երևանի բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափերի հաստատման մասին հարցը:

10. Տարեկան շահութաբաժինների վճարման մասին Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման օրվանից եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը (ամսական՝ հավասար չափերով), եթե ընդունվում է այդպիսի որոշում, շահութաբաժինների համայնքի բաժնեմասին համապատասխանող մասը վճարվում է Երևանի բյուջե:

11. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը (աշխատակազմի ֆինանսական վարչություն) ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տարեկան հաշվապահական հաշվեկշիռներում, որպես կրեդիտորական պարտքեր, Երևանի բյուջեի նկատմամբ շահութաբաժինների գծով պարտավորությունների արտացոլումը:

12. Սույն կարգի 11-րդ կետով սահմանված ժամկետներում տարեկան շահութաբաժիններն ամբողջությամբ Երևանի բյուջե չվճարելու դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումները (աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման ու վերահսկողության վարչություններ) Երևանի քաղաքապետի քննարկմանն են ներկայացնում համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների պաշտոնատար անձանց աշխատանքը շարունակելու նպատակահարմարության հարցը:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԻՆՉԵՎ 50 ՏՈԿՈՍ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Համայնքի սեփականություն համարվող մինչև 50 տոկոս բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններում տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշումներ ընդունելու դեպքում որոշման ընդունման պահից 15 օրվա ընթացքում այդ առևտրային կազմակերպությունում համայնքի լիազոր ներկայացուցիչները Երևանի քաղաքապետին են ներկայացնում տեղեկատվություն որոշման ընդունման օրվա՝ որպես շահութաբաժին Երևանի բյուջե վճարման ենթակա գումարի չափի և վճարման ժամկետների մասին:

14. Համայնքի սեփականություն հանդիսացող մինչև 50 տոկոս բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների բաժնետերերի (մասնակիցների) տարեկան ընդհանուր ժողովների՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ սահմանված ժամկետում, շահութաբաժինների՝ համայնքի բաժնեմասին համապատասխանող մասն ենթակա է վճարման Երևանի բյուջե:

VI. ՕՏԱՐՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՕՏԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

15. Համայնքի բաժնեմասից ստացված շահութաբաժինների գծով առևտրային կազմակերպությունների պարտավորությունները և դրանց մարման ժամկետները (մինչև 1 մլն. դրամ պարտավորության դեպքում՝ օտարման պայմանագրի կնքման օրվանից մեկամսյա, 1-5 մլն. դրամ պարտավորության դեպքում՝ երկամսյա, 5 մլն. դրամ և ավելի պարտավորության դեպքում՝ եռամսյա ժամկետում) առանձին տողով ամրագրվում են այդ առևտրային կազմակերպությունների օտարման և (կամ) օտարման նախապատրաստման մասին Երևանի ավագանու որոշման մեջ, ինչպես նաև օտարման պայմանագրերում:

VII. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

16. Համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններում շահութաբաժինների վճարման գործընթացում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների աշխատանքի համակարգումը, ինչպես նաև, ըստ առևտրային կազմակերպությունների, շահութաբաժինների՝ համայնքի բաժնեմասի չափերի վերանայման վերաբերյալ առաջարկությունների հիմնավորվածության աստիճանի գնահատման, հաշվառման, սահմանված կարգով և ժամկետներում վճարման, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող մինչև 50 տոկոս բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններում՝ շահութաբաժինների համայնքի բաժնեմասի հաշվառման և վճարման ժամկետների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական ու եկամուտների հաշվառման և գանձման վարչությունները:

17. Սույն կարգի 12-րդ և 17-րդ կետերով սահմանված ժամկետներում համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող, ինչպես նաև օտարված, սակայն շահութաբաժինների գծով Երևանի բյուջեի նկատմամբ պարտավորություններ ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից շահութաբաժիններն ամբողջովին Երևանի բյուջե չվճարելու դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված դրույթները սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգով:

18. Ուսումնասիրությունների ընթացքում տարեկան զուտ շահույթի, շահութաբաժինների հաշվարկման բազայի և շահութաբաժինների՝ համայնքի բաժնեմասի հաշվարկման հիմնավորվածության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչությունը և ներքին աուդիտի բաժինը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49-րդ, 50-րդ և 67-րդ հոդվածների պահանջներով՝ Երևան քաղաքի ավագանին, գործելով որպես Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների բաժնետերերի ընդհանուր ժողով, սահմանում է Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը, կանոնակարգում է շահութաբաժինների վճարման գործընթացում Երևանի քաղաքապետարանի ստորաբաժանումների լիազորությունները և աշխատանքի կազմակերպման կարգը:

Ներկայացված նախագծով առաջարկվում է կատարել լրացում՝ ամրագրել շահույթի բաշխման ուղղությունները:

Շահութաբաժինների հաշվարկման վերջին տարիների փորձից ելնելով՝ առաջարկվում է կատարել որոշ փոփոխություններ հաշվարկման բազայում՝ մասնավորապես, որպես ծախս չեն ընդունվում որոշ ծախսեր, որոնք պետք է ընկերությունների կողմից իրականացվեն շահութաբաժնի հաշվարկումից հետո ընկերության տրամադրության տակ մնացող զուտ շահույթի հաշվին: Դրանք են ստորև նշված ծախսերը.

- Ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվների սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությունը:
- Պետական կամ համայնքների բյուջեներ կամ կուտակային կենսաթոշակային համակարգին կատարվող վճարումների կամ հարկային մարմնի կողմից վերահսկվող այլ գումարների մասով Հարկային օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված կարգով հաշվարկվող և վճարվող տույժերը, տուգանքները և այլ գույքային պատժամիջոցները.
- Անհատույց տրամադրած ակտիվների (այդ թվում՝ առանձին ֆիզիկական և իրավաբանական անձանց անհատույց ֆինանսական և նյութական օգնության կամ խրախուսման տրամադրման և այլ համանման ծախսեր), ներված պարտավորությունների արժեքը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ ընկերությունների կողմից, ելնելով հաշվապահական հաշվառման քաղաքականությունից, իրականացվում է ակտիվների վերագնահատում, և ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության գումարները էականորեն տարբերվում են ակտիվների սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության գումարներից, ինչ էլ ազդում է տարեկան շահույթ-վնասի վրա, նպատակահարմար է շահութաբաժնի հաշվարկման տեսանկյունից մաշվածության գումարները հաշվարկել ակտիվների սկզբնական արժեքից:

Շահութաբաժնի հաշվարկման բազայի ձևավորման վրա չպետք է ազդեն նաև ընկերությունների կողմից կառավարման ընթացքում կատարված թերացումները և բացթողումները (տույժ-տուգանքների գումարներ), ինչպես նաև խրախուսման և բարեգործության նպատակով կատարված հատկացումները:

Գործող կարգից հանվել է նաև միջանկյալ շահութաբաժինների վճարման դրույթը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2010** ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ **18-**Ի **N 69-**Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2010** ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ **18-**Ի **N 69-**Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված 2
Հաստատված է Երևան քաղաքի
ավագանու 2020 թվականի
-------N ---------- որոշմամբ

«Հավելված 3
Հաստատված է Երևան քաղաքի
ավագանու 18.03.2010թ.N 69-Ա- որոշմամբ

Ձև

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող «----------» փակ բաժնետիրական ընկերության կողմից
Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի վճարման չափի առաջարկության մասին

Համայնքի մասնակցության չափը (տոկոս)	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ, (հազ. դրամ)	Չվճարված կապիտալ, (հազ. դրամ)	Զուտ ակտիվներ, (հազ. դրամ)	Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո (Ֆինանս. արդ. մասին հաշվ. Ձև N2 180 տող, սյուն 4), (հազ. դրամ)	շահութաբաժին ների հաշվարկման բազա Զուտ շահույթ (վնաս), հաշվի առած ավելացումները (հազ. դրամ)	Երևանի բյուջե փոխանցման ենթակա շահութաբաժինը		ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-ի հոդված 3-րդ կետի հիմքով շահութաբաժինների վճարման սահմանափակման առկայությունը
						տոկոս	հազ. դրամ	
1	2	3	4	5	6	7	8	9
						40		

Տեղեկանքի ներկայացման օրը

«----------» 2020 թ.

Գործադիր տնօրեն ----------

(ստորագրությունը)
(անունը, ազգանունը)

Կ. Տ.

Համապատասխան ստորաբաժանման ղեկավար
(վարչական շրջանի ղեկավար, վարչության պետ)

(ստորագրությունը)

(անուն ազգանուն)

Հավելված N 3
Հաստատված է
Երևան քաղաքի ավագանու
2020 թվականի -------N ---------- որոշմամբ

«Հավելված N4
Հաստատված է Երևան քաղաքի
ավագանու 2010 թվականի
18 մարտի N69-Ա որոշմամբ

ՀԱՇՎԱՐԿ

Կանոնադրական կապիտալում 50 տոկոսից ավելի համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից համայնքային բաժնեմասից ստացված տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի «----------» ՓԲԸ

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվետու տարվա փաստացի ցուցանիշը
1.	Զուտ շահույթը (վնասը)՝ շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո (ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ձև N 2, 180-րդ տող:	
2.	Շահութաբաժինների հաշվարկման բազան որոշելիս զուտ շահույթի (վնասի)՝ ավելացումներ՝ ընդամենը. **(2.1-ից 2.3 տողերի հանրագումարը)**	
	Այդ թվում	
2.1	ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվների սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությունը.	
2.2	պետական կամ համայնքների բյուջեներ կամ կուտակային կենսաթոշակային համակարգին կատարվող վճարումների կամ հարկային մարմնի կողմից վերահսկվող այլ գումարների մասով Հարկային օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված կարգով հաշվարկվող և վճարվող տույժերը, տուգանքները և այլ գույքային պատժամիջոցները.	
2.3	անհատույց տրամադրած ակտիվների (այդ թվում՝ առանձին ֆիզիկական և իրավաբանական անձանց անհատույց ֆինանսական և նյութական օգնության կամ խրախուսման տրամադրման և այլ համանման ծախսեր), ներված պարտավորությունների արժեքը:	
3.	Զուտ շահույթը (վնասը) հաշվի առած ավելացումները. **(տող 1 և տող 2 հանրագումարը)**	
4.	Շահութաբաժնի տոկոսադրույքը:	40
5.	Համայնքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը. **(տող 3 X տող 4)**	

Ընկերության տնօրեն՝ ----------
(ազգանուն անուն և ստորագրություն)

Կ.Տ

Ընկերության գլխավոր հաշվապահ՝ ----------
(ազգանուն անուն և ստորագրություն)